Կարգապահական գործ թիվ ԿԳ-16147

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 198-ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/131-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գարիկ Շուշանյանին (արտոնագիր թիվ 1278) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Գարիկ Շուշանյանն ունի 30.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հունվարից մինչև հունիս ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

26.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 302-Ա/ԿԳ-16147 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Գարիկ Շուշանյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

01.08.2016թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը՝

18:38-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պատասխանողի կողմից որևէ բացատրություն չի ներկայացվել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Վարույթին կցված են ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. և 13.10.2016թ. տրամադրված տեղեկանքներն, առ այն, որ փաստաբան Գարիկ Շուշանյանն ունի 30.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հունվարից մինչև հունիս ամիսների համար, որը չի վճարվել:

***5.* <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պատասխանողի նկատմամբ նույնանման խախտում կատարելու փաստերով նախկինում հարուցվել է 1 կարգապահական վարույթ, և Գարիկ Շուշանյանը ենթարկվել է կարգապահական տույժի նկատողության ձևով 03.03.2016թ.:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գարիկ Շուշանյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատի խորհուրդը կրկին հիշեցնում է, որ անդամավճարը հանդիսանում է Պալատի ընդհանուր պահանջմունքների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար անհրաժեշտ միջոց, առանց որի Պալատը չի կարող արդյունավետ կազմակերպել իր աշխատանքները:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի համաձայն. «Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար”, 19 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճար:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար, իսկ Պալատի Կանոնադրության 4.4.կետի համաձայն՝ Յուրաքանչյուր ամսվա անդամավճարի մուծումը կատարվում է դրան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Վերը նշված իրավանորմերի համաձայն՝ անդամավճարի մուծման ուշացումը հանդիսանում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17, 19 հոդվածների, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1 կետի և Պալատի կանոնադրության 4.4 կետի պահանջների խախտում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս, Պալատի խորհուրդը հաշվի է առնում այն հանգամանքը, որ՝ փաստաբան Գարիկ Շուշանյանը նմանատիպ խախտման համար նախկինում ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Գարիկ Շուշանյանին (արտոնագիր թիվ 1278) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:***

2. ***Փաստաբան Գարիկ Շուշանյանի (արտոնագիր թիվ 1278) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գարիկ Շուշանյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Երվանդ Վարոսյան